https://doi.org/10.46991/hc.2022.17.1.153

Արմեն Կարապետյան
պ.գ.թ.,ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. «Հայաստան» օրաթերթ, մեծ ողբերգություն, բազմահազար որբեր, տարագրություն, նամակ և ակնարկներ, Զորավար Անդրանիկ, տաղանդաշատ խմբագիր։

«Հայաստան» օրաթերթը պատմական ասպարզ ելավ Զորավար Անդրանիկի անմիջական ջանքերով ու պատասխանատվությամբ: Զորավարը գտնում էր, որ արևելահայ պարբերականները բավարար չափով չեն լուսաբանում տեղահանված արևմտահայության կյանքն ու կարիքները: Թերթի խմբագիր նշանակվեց արևմտահայ ճանաչված արձակագիր Վահան Թոթովենցը:

Թերթն իր ողջ գործունեության ընթացքում ուշադրության առանցքում պահեց Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արևմտահայության ունեցած սարսափելի աղետի ողջ գործընթացը՝ վերապրողների ու ականատեսների աչքերով ու հիշողությամբ լուսաբանելով արևմտահայկական գավառներում տեղի ունեցած ողբերգությունը: Դրանով իսկ «Հայաստան» պարբերականն առաջինը ստեղծեց Մեծ եղեռնի վավերագրությունը, որը հոգևոր ու բարոյական հուշարձան դարձավ մեր ժողովրդի հոգում:

Armen Karapetyan
PhD, senior researcher at the Institute of History of the NAS of RA

ECHOES OF THE ARMENIAN GENOCIDE AND DOCUMENTATION IN THE PERIODICAL "HAYASTAN"

Keywords: *"Hayastan" daily, a great tragedy, thousands of orphans, deportation, letter and reviews, General Andranik, talented editor.*

"Hayastan" daily entered the historical arena with the direct efforts and responsibility of General Andranik. The commander-in-chief felt that the Eastern Armenian periodicals did not adequately cover the life needs of the displaced Western Armenians. Well-known Western-Armenian prose writer VahanTotovents was appointed editor of the newspaper. Throughout its activities, the newspaper covered the whole process of the catastrophe of the Armenians of the West during the First World War, covering the tragedy in the provinces of the Armenians focusing on the memories of survivors and eyewitnesses.

Thus, the "Hayastan" periodical was the first to create the documentary on the Great Genocide, which became a profound and moral monument in the soul of our people.

Армен Карапетян
кандидат исторических наук,
старший научный сотрудник Института истории НАН РА

ОТКЛИКИ И ЛЕТОПИСЬ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «АЙАСТАН»

Ключевые слов: Ежедневная газета «Айастан», великая трагедия народа, тысячи сирот, депортация, письма и отклики, полководец Андраник Озанян.

Газета «Айастан» появилась на исторической арене благодаря непосредственным усилиям великого полководца и общественного деятеля Андраника Озаняна, полагавшего, что восточноармянские периодические издания не в полной мере освещают вопросы, касающиеся политических интересов западных армян.

Редактором газеты был назначен известный армянский прозаик Ваган Тотовенц.

В подавляющем большинстве публикаций на страницах газеты «Айастан» поднимался вопрос Геноцида армянского народа, осуществленного Османской империей в годы Первой мировой войны.

Тем самым именно газетой «Айастан» была создана летопись Геноцида армян, ставшая своеобразным духовно-нравственным памятником нашего народа.

* * *

Ներածություն: Հայ պարբերական մամուլի կարևոր հիշարժան օրգաններից մեկը 1917 թ. գարնանը (ապրիլին) Թիֆլիսում հիմնադրված «Հայաստան» օրաթերթն է, որը սովորաբար անվանում են Զորավար Անդրանիկի պարբերական: Նրա շուրջ համախմբվել էին արևմտահայ գործիչներ (գրողներ, մանկավարժներ, զենքի և ռազմական ոլորտի ներկայացուցիչներ): Թերթում հնչող կարծիքները, մտորումները, վերլուծականները, խմբագրականները կարելի է անվանել որպես արևմտահայության հասարակական տեսակետներ: Պարբերականի խմբագիրը՝ արևմտահայ տաղանդավոր գրող Վահան Թոթովենցը, իր տաղանդի ուժով ու զորությամբ ձեռամուխ եղավ համահայկական չափանիշներով և բովանդակությամբ պատմաքաղաքական, գրական, մշակութային, տեղեկատվական բնույթի պարբերական ստեղծելու գործին: Եվ նա հասավ իր նպատակին: «Հայաստանը» դարձավ հարյուրավոր և հազարավոր մարդկանց սպասված թերթը: Նրա էջերում հանդես էին գալիս արևմտահայ և արևելահայ մտավորականներ, սփյուռքահայ գործիչներ:

Հիմնահարցի ուսումնասիրության աստիճանը: Զորավար Անդրանիկի գործունեությունը արևելահայկական իրականության մեջ ուշագրավ է: Հայկական

ազատամարտի անզուգական հերոսը, գտնվելով բոլորովին այլ հասարակական-քաղաքական իրավիճակում, որոշում կայացրեց նաև գրով ու գրչով մասնակից լինել հայ ժողովրդի ինքնապահպանության ու ինքնապաշտպանության գործին: Անդրանիկի ու իր համախոհ գործիչների և, առաջին հերթին, Հովհաննես Թումանյանի ջանքերով կյանքի կոչվեց «Հայաստան» անունը կրող պարբերականը, որը հետևողականորեն հետամուտ եղավ ոչ միայն արևմտահայության, այլև ողջ հայության առջև ծառացած հիմնահարցերի ու մարտահրավերների բարձրաձայնմանը, քննությանն ու կարգավորմանը:

Պարբերականի առաջին համարում ողջ հայությանն ուղղված պատգամախոսությամբ հանդես էին եկել Հովհաննես Թումանյանը («Հայաստանը պետք է խոսի») և Զորավար Անդրանիկը («Հայրենիքի վերաշինությունը»):

«Հայաստանը» հրապարակվեց 1917 թ. ապրիլից մինչև 1918 թ. փետրվար, երբ Անդրանիկը նշանակվեց Էրզրունի ճակատի պաշտպանության ղեկավար և մեկնեց Էրզրում: Նա հրահանգեց թերթի խմբագիր Վահան Թոթովենցին իրենց հետ տանել նաև տպագրական տառերն ու սարքերը՝ այնտեղ թերթի հրատարակությունը շարունակելու համար: Սակայն Էրզրումի մոտ հայկական ուժերին չհաջողվեց կանգնեցնել թշնամու առաջխաղացումը, իսկ թերթն այլս չշարունակեց իր գործունեությունը:

Սույն թեմատիկային անդրադարձել են մի խումբ պատմաբաններ ու հրապարակագիրներ: Հատկապես արժեքավոր է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Սիմոնյանի «Անդրանիկ ժամանակը» երկհատոր աշխատությունը: Վերոնշյալ հեղինակի առաջին հատորում պարզաբանված են «Հայաստան» թերթերի հիմնադրման ու հրատարակության, թերթի գաղափարական ու ստեղծագործական բովանդակությանը առնչվող բազմապիսի հարցեր (Սիմոնյան, 1996, 552-564):

«Հայաստան» պարբերականին առնչվող հարցեր ու հարցականներ են քննվում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համբարձում Կարապետյանի «Անդրանիկ» աշխատության էջերում (Կարապետյան, 1992, 431-438):

«Հայաստան» թերթի հրատարակության անհրաժեշտության, նրա գաղափարական սկզբունքների վերաբերյալ կարևոր նյութ է պարունակում դեպքերի անմիջական ականատես ու մասնակից, սփյուռքահայ մտավորական Լևոն Թյութունջյանի 1975 թ. Բեյրութում հրապարակված աշխատությունը (Թյությունճյան, 1975, 159-170):

Զորավար Անդրանիկի հիմնադրած պարբերականի գործունեությանն առնչվող խնդիրները քննության են առնված Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր և տնօրեն Հովհաննես Այվազյանի հրապարակած աշխատության մեջ (Այվազյան, 2004, 68-86):

Թերթին անդրադարձ կա նաև այլ աշխատություններում (Չելեպյան, 1990, 387-388; Մարմարեան, 1920, 260): Սակայն պետք է նշել, որ սույն դիտանկյունով մեր ուսումնասիրությունը առաջին փորձն է «Հայաստան» պարբերականը արժևորելու գործում, որը, իհարկե, առաջիկայում նոր շարունակություն կունենա:

Մեծ եղեռնի վավերագրությունը: Ի թիվս այլ կարևոր հիմնահարցերի՝ «Հայաստանի» էջերում, սկսած նրա առաջին համարներից, էապես լուսաբանվում էին Հայոց մեծ Եղեռնի, Արևմտյան Հայաստանի կորստի թեմաները: Ծանրախորհուրդ խորհրդածություններով, հուսահատական տրամադրություններով էր շնչում թերթի յուրաքանչյուր համարը, որը տխրություն ու վշտի զգացում էր սփռում ամենուրեք: Վիշտը խորն էր, անհատակ, և դա

զգացվում էր թերթի յուրաքանչյուր նյութից: Արևմտահայ գրագետ Լևոն Թութունջյանը սույն կերպ էր արձանագանքում վերոնշյալ իրողություններին. «Բայց այսօր աչքերս արտասունք չունին, և հոգւոյս մէջ ժպիտ չկայ՝ խոյանքի՛: … Մեր բոյնը ագռավներն են թառե՛ր և մենք վիրաւոր թեերով հանգչելու անկիւն չունինք: Հայրենի՛ք, մինչև այն օրը, երբ այլևս տուն արցյունք չունենաս, մինչև այն օրը, երբ քեզի տանք ապրելու իրաւունքիդ ազատ վերականգնման հոյակապ Տոնը… Հայրենի՛ք, ամէն ինչ քու արևիդ համար…» (Թիւթիւնջեան, «Հայաստան», 21.04.1917):

«Հայաստանը» նկարագրում էր արևմտահայկական նահանգներում ու գավառներում վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունները, տալիս համապարփակ պատկերը արևմտահայության կրած մեծագույն ողբերգության: Ավերակված հայրենիքի և ողջակիզված ժողովրդի հանդեպ հոգեկան պատքի ու պարտավորվածության սրված զգացումը ներհատուկ ու բնորոշ էր «Հայաստանի» քսաներեքամյա կապուտաչյա խմբագրին ու ողջ խմբագրակազմին: Խմբագիրն իր ուղեղի և արյան բոլոր բջիջներով զգում ու գիտակցում էր, թե ինչպիսի աննախադեպ մասշտաբների խորշակ է անցել իր հայրենիքի երկնակամարով: Եվ այդ զգացողությունը նա գրական նրբին վարպետությամբ է արտահայտել. «Ես ծաղիկ չունեմ» փոքրիկ ակնարկում. «Իմ ծաղիկները ես բաշխեցի ուրիշներուն, եւ իմ գարնան կողովը պարապ է: Արծաթ չընտացայ ես իմ ծաղիկներուս փոխարէն, այնպէս տուի ես բոլորին իմ գարնան կարմիր վարդերը…

Ես հազիւ կը դողդոջեմ անոնց թարմութեան յիշատակով» (Թոթովենց, «Հայաստան», 1917, թիվ 17):

Պետք է արձանագրել, որ «Հայաստան» թերթով առաջին անգամ լայնորեն քննարկվում էին արևմտահայության ճակատագրին առնչվող հարցերը հետեղեռնյան շրջանում, «արևելահայ հասարակական շրջանների ուշադրությանն էին հանձնվում նրա (արևմտահայության – Ա. Կ.) փրկության ու գոյության հրատապ խնդիրները, փորձ էր արվում կոնկրետ քայլեր անելու հայ ժողովրդի երկու հատվածների միասնության հաստատման և ամրագրման, ինչպես և միասնաբար գործելու ուղղությամբ» (Աղայան, 1994, 579):

Այո՛, թերթը տենդագին կերպով ուղիներ էր փնտրում և նախանշում արևմտահայության բեկորները փրկելու ուղղությամբ: Բայց և չէր մոռանում կորուսյալ հայրենիքի ոչ մի հատվածը, նրա անցյալն ու ներկան: Ծանր ու մղձավանջային էր հետեղեռնյան իրականությունը. «Այնքան մերկ ու խոպան ներկայի մասին դժբաղդաբար աւելի խօսքեր չիկան գրելու» («Հայաստան», 1917, թիվ 17): Բայց այս խոսքերը, այնուամենայնիվ, գտնվում էին, ու թերթի էջերում գրվում էր «Մեծ եղեռնի պատմության տարեգրությունը», և այդ տարեգրությունը առաջինը ստեղծում էր «Հայաստան» պարբերականը:

«Մեծ եղեռնի պատմությունը» խորագրի ներքո գրեթե յուրաքանչյուր համարում ընդարձակ ծավալով նյութեր էին հրապարակվում:

1917 թ. մայիսի 7-ին «Տաճկական պատերազմի անցքերը» վերնագրով նյութը օրագրային նկարագրություն է Վանի ու Մշո դաշտի գյուղերում քրդական ավազակապետերի կատարած անօրինակ ոճիրների վերաբերյալ: Նշվում է, որ

պատերազմը սկսվելու առաջին իսկ ամիսներից հայկական բնակավայրերում սոսկալիորեն լարված իրավիճակ էր տիրում:

Որոշ համարներում նյութերի զգալի մասը (էջերի մոտ կեսը և ավելին) նվիրված էր արևմտահայոց ապրած գողգոթային: 1917 թ. օգոստոսի 10-ի համարում առաջին էջում ներկայացված են Տարոն աշխարհի հոգևորական զոհերը: Նրանց ցուցակը գլխավորում է Տարոնի հոգևոր առաջնորդը՝ իր գործունեությամբ այնքան առանձնահատուկ ու նշանավոր Վարդան վարդապետը (Վարդան ծ. Վրդ. Հակոբյան): Նրա մասին ասվում է, որ իր ազդեցիկությունն ու հմայքը տարածված էին նաև Մշո դաշտի և Մուշ քաղաքի դրացի քրդերի ու թուրքերի վրա: Իրավ, ճշմարտացիորեն է եզրահանգվում նրա վիթխարի գործունեության ամբողջական պատկերը. «25 տարի է հետէ յեղափոխական շարժումներու ուղն ու ծուծը, գոյութեան հիմնաքարն ալ այս եկեղեցականը եղած է Տարոնի մէջ, եթե ան գոյութիւն չունենար, ոչ մեկ յեղափոխական պիտի ապրէր Սասունի և դաշտի մէջ» (Տարօնի հոգեւորական զոհերը, «Հայաստան», 1917, թիվ 92): Նույն այս համարում Մեծ եղեռնի զոհ հայ երեսփոխաններից ներկայացված է Հարություն Ճանկուլյանը:

Իսկ «Մեծ եղեռնի պատմությունը» շարքում ներկայացված են Սղերդի հայության բնաջնջման տարեգրությունը և «Եղեռնի օրերը Հապուսիի մէջ» նյութը: Հապուսին Խարբերդի դաշտի բարգավաճ բնակավայրերից մեկն էր, որը 1915 թ. ապրիլ-մայիսին ենթարկվեց թուրքական խորշակին: Ընդ որում, կատարվածի ձեռագիրը նույնն էր, ինչպես մյուս բնակավայրերում: Նախ հայ բնակչությունից հավաքեցին զենքն ու զինամթերքը, ապա բռնագրավեցին անասունները, պարենի պաշարները: Ապա պաշտոնյաներն ու ոստիկանները նորից վերադարձան և դաժան կտտանքների ենթարկելով բնակիչներին՝ ձգտում էին անգամ դանակներն ու ծակող գործիքները լրիվությամբ բռնագրավել: Հետագան արդեն հայտնի է: Հետաքրքիր է, որ առերևույթ թուքերից էլ խլել էին զենքը. «Երևոյթապէս ցերեկ ժամանակ թիւրք հասարակութիւն էն զէնքեր կը հաւաքեն, իսկ գիշերը կրկին կը վերադարձնեն ու կը զինեն ամենայետին թիւրք անհատը» (Տարօնի հոգեւորական զոհերը, «Հայաստան»,, 1917, թիվ 92):

Թերթի էջերում հաճախ էին նյութեր զետեղվում՝ եղեռնի հետևանք հանդիսացող հայ բազմահազար որբերի կացության ու հիմնահարցերի շուրջ: Նաև գործնական բնույթի հարցեր ու հարցականներ էին արծարծվում:

Ինքը՝ խմբագիր, բանաստեղծ, արձակագիր ու հրապարակագիր Վ. Թոթովենցը, որբերին նվիրված տխրաթախիծ ձոներգ էր հնչեցնում «Հայաստանի» էջերում այսպես, այս ոճով ու ոգով. «Հիմակուհիմա ձեր պատմութիւնը գրող չիկայ: Դուք պիտի գծէք օր մը Ձեր հոգեկան աշխարհի պատկերը: Միայն Ձեր ձեռքով գծած պատկերը կրնայ տալ Ձեր վշտին ու տժգոյն քնարերգութեան և ահաւոր սասանման տեսիլը» (Որբերուն, խմբագրական, «Հայաստան», 1917, թիվ 95):

Խմբագիրը բնավ էլ գույները չի խտացնում, հուզմունք, և ահասարսուռ հոգեվիճակ առաջացնելու համար չէ, որ կատարում է սույն շեշտադրումը. «Ձեր աշխարհի փիլիսոփայութիւնը մանկական չէ, որովհետև մանկութիւնը ձեր մէջ թոչուն ըլլալէ, փետուր ունենալէ դադրած է: Ես կարդացած եմ Ձեր գրականութիւնը, Ձեր երգերն ու բանաստեղծութիւնը: Ես գիտեմ, որ դուք պիտի բարձրանաք և պիտի երգէք, թաթաւուն տրտմութեամբ, նոր քնարով և չնաշխարհիկ հագներգութեամբ… Այսօրուան պատմութիւնը

մենք կը թողունք Ձեզի, որպէսզի դուք դարձնէք զայն մեծ ու նուիրական» (Որբերուն, խմբագրական, «Հայաստան», 1917, թիվ 95):

«Սղերդի բնաջնջումը» խորագրով ընդարձակ նյութը ներկայացնում է Սղերդի հայության բնաջնջման գործընթացը: Հեղինակը՝ ականատես Արմենակ Փանոսյանը, հաղորդում է, որ սույն շրջանում գտնվեցին նաև բարեսիրտ քուրդ հայրենակիցներ, որոնք, հարևանության պատիվը «յարգելով. . . , պահեցին իրենց տներ, բայց օսմանյան երեսփոխանական ժողովի նախկին անդամ սղերդցի Ապտիլլ էֆենտի որ շնորհիւ հայերի մարդ եղած էր մինչեւ երեսփոխանի աստիճանի բարձրանալը, այս անգամ չի մոռանար իր վատութիւնը ցոյց տալ հայեր ու անոնց ըրած բարիքի փոխարեն չարիք հատուցանել» (Որբերուն, խմբագրական, 1917, թիվ 95; Փանոսյան, «Հայաստան», 1917, թիվ 92):

Հենց վերոնշյալ երեսփոխանն է իշխանություններին հայտնում, որ քրդերի տներում բազմաթիվ հայեր են թաքնվում և օգնական ուժեր ստանալով՝ կասկածելի թվացող քրդական բնակարաններում խուզարկություններ կատարում և հայտնաբերված հայերին անմիջապես սպանել տալիս:

Սղերդահայության ողբերգության պատկերը եզրափակվում է այսպես. «400-500.000 բնակչութիւն ունեցող Սղերդը իր գաւառակներով այսօր հայութիւնէն դատարկ է եղեր, միայ կին և երեխաների մի չնչին տոկոսն է մնացեր Միջագետքի անապատները (Եթե մինչեւ հիմա ողջ են)» (Փանոսյան, «Հայաստան», 1917, թիվ 92):

Առանձին նյութով («Եղեռնի օրերը Հապուսիի մէջ») նկարագրվում է Խարբերդի դաշտի ամենաբարգավաճ բնակավայրերից մեկում տեղի ունեցած նախճիրի գործողությունը. «1915 ապրիլի այս օրերը, սև օրերը կուգային խամրեցունելու Հապուսիի անմեղ գիւղական կեանքը, աւեր ու քանդ անելու Խարբերդի միակ շէնշող գիւղը» (Եղեռնի օրերը Հապուսիի մէջ, «Հայաստան», 1917, թիվ 92):

Հետաքրքիր է, որ անգամ այդ ժամանակ ականատեսները ճիշտ են հասկացել և գնահատել եղեռնի կազմաբանությունը, տեղի ունեցած իրադարձությունների ծրագրված լինելն ու որոշակի սցենարով իրագործումն թուրքական իշխանությունների կողմից:

Խարբերդի դաշտի այս շեն ու շռայլ գյուղում ևս, ինչպես ամենուր, կոտորածի ու թալանի սկիզբն ու ընթացքը գրեթե նույնակերպ են ընթանում. «Աղէտը սկսած էր, գիւղիս հարստութեան մէկ կարևոր մասը կազմող ոչխարները, կովերը, եզները և այս կարգի կենդանիները մէկիկ-մէկիկ բռնի կը տարուէին: Հաւեղենները, պարէն ու պաշար թալանելով սպառնալիքի տակ կը տարուէին» (Եղեռնի օրերը Հապուսիի մէջ, «Հայաստան», 1917, թիվ 92):

Այնուհետև սկսվում է զենքի բռնագրավման գործնթացը. «1915 մայիսի սկզբներն էր. Տեղւոյս Միւտիրը հրամայեց, որ բոլոր հայերու քով գտնուող զէնքերը իսկոյն հաւաքուին, ըսելով որ ասկե առաջ Սահմանադրութիւն էր և ազատ էին զենք կրելու, իսկ այժմ կառավարութիւնը կը հրամայէ որ բերեք ու յանձնեք իրրև հաւատարիմ հպատակներ, քանի որ թիւրքերն ալ իրնեց զէնքերը պիտի յանձնեն» (նույն տեղում): Այս մեթոդը թուրքական իշխանությունները կիրառել են բազմիցս և շատ վայրերում: Ցերեկով առերևույթ թուրք հասրակությունից էլ հավաքում էին զենքերը, իսկ գիշերով այն վերադարձնում և զինում ամենահետին թուրքին անգամ:

Հապուսիում զենքերի մի մասը հանձնում են, բայց թուրք իշխանավորները հասկանում են, որ դա ամբողջը չէ, և շրջանային կառավարիչը ոստիկանական համալրված ուժերով գալիս է գյուղ ու հրամայում. «Պէտք է յանձնէք ձեր բոլոր զէնքերը և նոյն իսկ ձեր քով գտնուող դանակները… Հավաքեցին մեզ մօտ գտուող մեր զենքերը և գացին» (նույն տեղում): Սակայն մի քանի օր անց սույն գործողությունը նորից կրկնվում է: Այս անգամ ծեծում, անարգում, տանջամահ են անում գյուղի տարիքով և հեղինակությամբ լի մարդկանց. «Միւտիրը խիստ զայրացած հրամայեց ոստիկաններու, որ գիւղին մեծերը պատիժներու ու ծեծերու ենթարկէր ամենադառն միջոցներով» (Եղեռնի օրերը Հապուսիի մէջ, «Հայաստան», 1917, թիվ 92):

Ահա եղեռնական օրերի դասական մի օրինակ, որը կրկնվեց Արևմտյան Հայաստանի հարյուրավոր բնակավայրերում, կրկնվեց ամիսներ շարունակ:

Պարբերականի էջերում դեռևս թարմ հետքերով, երբ դեռ արյունը չէր չորացել, զոհերի անունները ու հիշատակը կենդանի ու կենսունակ էին, երբ ոճրագործներն էլ կարծես դեռ նրանց կողքին էին, ահա այսպես ստեղծվում և սերունդների դատին էին հանձնվում Մեծ եղեռնի պատմությունն ու տարեգրությունը:

1917 թ. օգոստոսի 19-ին «Հայրենի նամականի» խորագրի ներքո տպագրված ակնարկում նկարագրվում է Կարինից դեպի Երզնկա տանող ճանապարհին ընկած Ըլըճա գյուղի ապրած ողբերգությունը: Այս գյուղի 100 տուն հայությունից «հիմա կը գտնուի հազիւ 4 տուն 18 անդամներով, մնացեալ ամբողջ գիւղացիները Մեծ եղեռնին զոհ գացած էին: Գտնուած հայութիւնը ամեն ջանք կը թափէ գիւղի վերաշինութեան, բայց չիկա և ոչ մի օգնութիւն դուրսէն որ կարողանան իրենց նպատակին հասնել» (Մեր սեփ թղթակից, Երկու օր Կարնոյ Ըլըճա գիւղի մէջ, «Հայաստան», 1917, թիվ 98): Խոսվում է նաև հարևան Մամախաթուն գյուղի կացության մասին, որը նույպես ավերակ վիճակում է: Կրկին ընդգծվում է, որ գաղթական հայությունը ամեն տեղ էլ ողբալի դրության մեջ է, խղճահարույց, բայց «Քղիի հիւհսային մասին մէջ եղող փոքրաթիւ հայ գաղթականութեան վիճակը իր աննախանձելիությամբը կը գերազանցէ բոլորը, բաղդի բերմամբ կենտրոններէ հեռի ինկած ըլլալուն համար» (Մեր սեփ թղթակից, Երկու օր Կարնոյ Ըլըճա գիւղի մէջ, «Հայաստան», 1917, թիվ 98):

Պարբերականի էջերում հաճախ թղթակցություններ ու նամականեր էին տպագրվում Կարին (Էրզրում) քաղաքից և նրա շրջակայքից: Կարինից ուղարկված սույն նամակը այնքան հուզախառով լիցքերով է պարուրված. «Կանցնիմ մէկիկ-մէկիկ հայոց թաղի փլատակներուն առընթեր: Ազգ, առաջնորդարանը քանդուած, Ս. Աստվածածին եկեղեցւոյ զանգակատունը փլցուած, Արծնեան վարժարանը արյուած: Ո՞ւր է «Յառաջը», ո՞ւր է երիտասարդութիւնը, ո՞ւր է վերջապէս զարթ կեանքը՝ նախկին Կարնոյ:

Չկա՛ն: Ասոնց հակապատկերն է որ կը ցցի անցորդի աչքին» (Հայրենի նամականի, «Հայաստան», 1917, թիվ 99): Կարնո հիվանդանոցներն ու որբանոցները, ամեն կողմ որբերի ներկայություն՝ լռին ու խոհուն, անմեկնելի իրենց գիտակցությանը՝ կատարված աննախադեպ նախճիրին անհասանելի…:

«Հայաստանը» ուշադրության առանցքում էր պահում Միջագետքը, ուր հազարավորներ «մեր միսէն ու արիւնէն, կտոր կտոր քայքայումի մը մէջ այլևս չեն սպասեր վաղուան արշալոյսին» (Թյուրյունճյան, «Հայաստան», 1917, թիվ 97):

Հեղինակը ամենևին չի սաստկացնում գույները, երբ նշում է, որ ունենք ահարկու և ճգնաժամային գոյության մեջ գալարվող օսմանյան երկրի հայությունը, «որուն կեանքը, որքան հաւատարմութենէն այնքան՝ սովէն կախում ունի» (Թյությունճյան, «Հայաստան», 1917, թիվ 97):

Եվ, իհարկե, պատկերն ավելի հուսադրական չէ գրավյալ շրջաններում: Ահա խտացված արտահայտությունը վերոհիշյալ մտորումների. «Ունինք հայ գիւղացին, կամ անոր ստուերը գրաւուած շրջաններուն մէջ, լաւագոյն հայը՝ որ պիտի յուսար և որմէ սակայն կը խզեն ամեն յոյսի առիթ» (Թյությունճյան, «Հայաստան», 1917, թիվ 97):

«Հայրենի նամականի» շարքում «Ծննդավայրիս մէջ թափառական» վերնագրված նյութը ներկայացնում էր Դերջանի գավառակի երեկն ու այսօրը: Դերջանի գավառակը, որը հայտնի էր ցորենի և գարու անբավ շտեմարաններով ու բավարարում էր ոչ միայն Կարինի և Երզնկայի ազգաբնակչությանը, այլև օսմանյան զորքերի կարիքները, այժմ ամայի պատկեր է ներկայացնում: Պատերազմի դաժան հետևանքները «ամէն կողմ կը ցցւին առջևդ: Կանցնինք Սանսա-Տէրէսին, ուր Եփրատը կուլ տուաւ հազարաւոր հայ զինուորներ և շատ դերջանցիներ թրքական գնդակներէն և յաթաղանէն հալածական: Այժմ տասնեակ հազար զոհերու աղեխարշ և սրտաճմլիկ պատմութիւններով Եփրատը կը գալարուի միշտ դէպի առաջ նոր զոհեր խլելու Երզնկայի Կամխայ և Խարբերդ դաշտերէն անցնող գաղթականներէն» (Մեր սեփ. թղթակից, Ծննդավայրիս մէջ թափառական, «Հայաստան», 1917, թիվ 106):

Նամակ-ակնարկի ավարտին գծագրվում է Երզնկան՝ փողոցները ամայի, տները՝ քարուքանդ, ավերակներու իսկական համայնապատկեր…:

«Ջարդերը եւ փախստականները» հոդվածում քննության է առնվում Բաղդադում և նրան կից շրջակայքում պատսպարված հայ կանանց ու երեխաների վիճակը՝ նշելով, որ ամենագովելի գործը, «որ առաջ տարվելու վրայ է հիմա Պաղտատի մէջ, ջարդերէն ազատուած հայ կիներու և երեխաներու ազատագրութիւնն է» (Լեւոն Մեսրոպ, «Հայաստան», 1917, թիվ 107): Բազմաթիվ հայ երիտասարդ կանայք բացահայտվում են մահմեդական ընտանիքների ու ապաստարանների միջից, և հանդիպում են շատ երեխաներ, որոնք իրենց որդեգրող ընտանիքներում «մնացեր էին մէկ կամ աւելի տարիներ և մոռցեր էին իրենց մայրենի լեզուն» (Լեւոն Մեսրոպ, «Հայաստան», 1917, թիվ 107):

Նոր ազատված գաղթականների մասին մանրամասնվում է Խնուսից ուղարկված ակնարկաշարում: «Նրանք՝ թիվ 108 անձ, 1917 թ. օգոստոսի 30-ին հասել են Խնուս: Սովից և երկարատև ճանապարհային երթից բոլորն էլ հյուծված ու ուժասպառ ելած: Այն աստիճանի տկարացած են, որ ոտքի վրա կանգնելու կամ նստելու անընդունակ են, ամբողջ օրը պառկած են խոտի վրա: Ըստ հասած տեղեկությունների, նրանք «ամբողջ երկու տարի ապրեր են վայրենի բանջարներով, սովը և տարափոխիկ հիւանդութիւնները հազարաւոր կեանք են խլեր իրենց շարքերէն» (Լեւոն Մեսրոպ, «Հայաստան», 1917, թիվ 107):

Հայրենի նամականին տեղեկություններ էր հաղորդում նաև Եկեղիքի գյուղերի վերաբերյալ: Նամակագիրը գրում է. «Մէկիկ-մէկիկ կայցելեմ գիւղերը … ամայի, քայքայուած և այլակերպ: Ո՛չ քաղուորը կայ դաշտերը և ո՛չ մակատեղիները՝ ուր հարիւրաւոր հարսներ, աղջիկներ սիթիլներով կը փութային կաթ կթելու: Ո՛չ

դպրոցականներու երգ ու պարը կան և ո՛չ զանգակներու ղողանջը» (Մելիքեան, «Հայաստան», 1917, թիվ 110):

Տպավորությունն ու զգացողությունը այն աստիճան սոսկալի են ու հրեշավոր, որ մարդ ակամայից «կը սոսկայ, կը կարծէ որ սխալ տեղ եկած է, ուր մարդկային ոտքը տակաւին ոտք կոխած չէ, և ուր օձերն ու գազանները հիմա պիտի յօշոտեն քեզ: Բոլոր գիւղերը նոյն վիճակին են» (Մելիքեան, «Հայաստան», 1917, թիվ 110):

Թերթում նույն այս ակնարկային ոճով ու տրամաբանությամբ տեղեկություններ եղան Կեսարիայի հայության ջարդերի և կոտորածների վերաբերյալ: Տարբեր վայրերում կատարվածը տարբեր ականատեսների վկայություններով նույնանում է: Այո՛, թուրք ջարդարարության, ալան-թալանի թուրքական ձեռագիրն ու ոճը նույնն են ամեն տեղ, ամենուրեք:

Եվ դա առաջինը փաստել են սույն ականատեսներն ու վերապրողները, մինչ պատմաբաններն ու հետազոտողները դա կանեին ու կապացուցեին գիտականորեն՝ գիտական ուղիներով ու մեթոդներով: Ահա այսպես, ականատեսը՝ կեսարացի Մելքոն Մյուվտիվրյանը, փաստեր է ներկայացնում Կեսարիայի հայության ապրած ողբերգության վերաբերյալ: 1915 թ. թուրքական իշխանությունները խաբեբայությամբ ու ուխտադրժորեն հավաքեցին հայերի մոտ եղած դրամական ու նյութական միջոցները: Ապա իշխանությունները հրահանգեցին հավաքել հայերի մոտ եղած զենքն ու ռազմամթերքը: Հայերը, երբ հայտնում էին, որ զենք չունեն իրենց մոտ պահած կամ թաքցրած, դա պատրվակ էր դառնում թուրք ռազմական պատասխանատուներին բոլոր հայ տղամարդկանց բանտարկելու: Ապա հայերին «սկսեցին ենթարկել զանազան դժոխային չարչարանքների, գամում էին ոտքն ու ձեռքերը տախտակների վրայ, դանակով կտրատում էին նրանց մարմնի զանազան մասերը և մէջը աղ լցնում, որպէսզի նրանք ասէին իրենց զէնքերի պահեստների մասին» (Կեսարացի Մելքոն, «Հայաստան», 1917, թիվ 98, 110): Եվ երբ իշխանությունների մոտ փարատվում էր ամեն մի կասկած հայերի զինվածության վերաբերյալ, նրանք ձերբակալում էին երիտասարդներին և առանձին-առանձին խմբերով «տանում անորոշ ուղղութիւններով, իսկ «… նախապատրաստուած թիւք խուժանը զինուած սպասում էր նրանց կիրճերում և արահետներում, ուր և երիտասարդութիւն բոլորովին մերկացնելուց յետոյ կոտորում և դիակները թափում էին բաց երկնքի տակ» (Կեսարացի Մելքոն, «Հայաստան», 1917, թիվ 98, 110):

Եվ երբ երիտասարդությունը կոտորվել էր արդեն, սկսվեց ժողովրդի մնացած հատվածների տեղահանությունը Հալեպի ուղղությամբ, ուր և «թիւրք կանոնաւոր զօրքի հետ պաշիպօզուկների խուժանը սպասում էր նրանց բնաջնջելու: Առ այդ սկսուեց առևանգումը գեղեցիկ կանանց և աղջիկների և փոքր երեխաների, իսկ մնացեալ ժողովուրդը մասսայական կերպով ենթարկուեց կոտորածի» (Կեսարացի Մելքոն, «Հայաստան», 1917, թիվ 98, 110):

Ահա եղեռնի իրագործման թուրքական հաշվարկն ու կազմաբանությունը: Թերթում ակնարկներ էին տպագրվում Արևմտահայաստանի գրեթե բոլոր գավառների վերաբերյալ, նկարագրվում նրանցում մահաբեր տարիներին տեղի ունեցածը, տեղեկություններ հաղորդվում ներկա վիճակի մասին: Այս առումով «Հայաստանը» առաջինը ստեղծեց ու կազմավորեց Մեծ եղեռնի վերաբերյալ ամբողջական վավերագրությունը, որն

արժանահավատ էր, քանզի լիովին հիմնված էր ականատեսների խոհերի ու վկայությունների վրա:

Բացի եղեռնի վավերագրությունից՝ թերթը մշտապես տեղեկություններ էր հաղորդում գաղթականների տեղաշարժի, նրանց կացության վերաբերյալ: Հաճախակի էին ակնարկներն ու անդրադարձերը եղեռնի հետևանքը հանդիսացող որբերի կացության ու խնամքի, որբանոցներում տիրող իրավիճակի շուրջ:

«Թրքահայերը հայրենիքէն դուրս» խորագրով տեղեկություններ էին հաղորդում Ռուսաստանի և այլ երկրների տարբեր քաղաքներում ապաստան գտած արևմտահայերի և նրանց կազմավորած հայրենակցական միությունների գործունեության վերաբերյալ: Հաճախ էին արևմտահայ փախստականներն ու տեղի հայ հայրենասերները արդյունավետ համագործակցություն ծավալում: Օրինակ՝ Խարկովում «… տեղւոյս և տաճկահայ երիտասարդութեան գործունէութեան նշանաբանը եղած է ամէն բանէ առաջ փլատակուած հայրենիքի վերաշինութեան ծառայել, սովալլուկ մանուկներին խնամել, անօթիին հաց և մերկին զգեստ տալ» (Լեպլեպիճան, «Հայաստան», 1917, թիվ 98, 107):

Այսպիսով, ինչպես ակներև է վերոնշյալ շարադրանքից, «Հայաստան» պարբերականը, որը պատմական ասպարեզ եկավ տաճկահայ փախստական գործի համար և բացառապես պիտի զբաղվեր այդ կոտորված ու հայրենազրկված ժողովրդի կարիքներով, իր էջերում ամրագրեց նաև Մեծ եղեռնի վավերագրությունը:

1917 թ. օգոստոսի 23-ին Կարապետ Մանուկյանի ստորագրությամբ «Մեռելոց» ակնարկը ազդարարում էր, որ հոն «չկայ շիրիմներ և ոչ ալ տապանաքարեր, ասոնց փոխարէն ընդարձակ տարածութիւնների վրայ տեղ տեղ կը տեսնեմ կմախկացած գանգեր, հողէն դուրս ցցուած հազարաւոր սրունքներու և բազուկներու ոսկորներ, կը դիտեմ և պահ մը աչքերս կը գոցեմ… Եւ ահա ատոնց Եղեռնի հուշարձանը որ այս փշրուն գանկերէն ձեռակերտուած և արիւն-արցունքի շաղախով թրծուած է, աչքիս առջև կը պատկերանայ «Մեծ Եղեռնի զոհեր» տապանագրով» (Մանուկեան, «Հայաստան», 1917, թիվ 98):

Այո՛, մինչ մեր ժողովրդի հիշողությունը հուշարձան կդառնար Ծիծեռնակաբերդում և թրի նման կմխրճվեր երկինք, Մեծ եղեռնից երկու տարի անց այն հոգևոր ու բարոյական հուշարձան դարձավ Զորավար Անդրանիկի կողմից հիմնադրված «Հայաստան» պարբերականի էջերում որպես զգուշացում, տագնապ ու ճիչ, նաև նախատինք՝ուղղված հանուր մարդկությանը:

Եզրակացություն: Այսպիսով՝ «Հայաստան» պարբերականը հավատարիմ մնաց իր կոչմանն ու առաքելությանը:

«Հայաստանը» ներկայացրեց հայրենիքի՝ Արևմտահայաստանի աղետյալ վիճակը, ժողովրդի ողբերգական կացությունը: Նրա էջերում հանդես եկան ողջակիզումից՝ Մեծ եղեռնից փրկվածները, որոնք այսուհետև հայոց մատենագրության մեջ կոչվելու էին վերապրողներ:

«Հայաստանը» մեր մատենագրության մեջ առաջիններից էր, որ նպատակադրված կերպով փորձ արեց ստեղծելու Մեծ եղեռնի վավերագրությունը՝ Արևմտյան Հայաստանի նահանգների և գավառների օրինակով: Նրա էջերում պարզորոշ գծագրվեցին և հստակեցվեցին թուրքական բարբարոս իշխանությունների կողմից իրագործված հայաջինջ

գործողությունների պլանավորվածությունն ու նպատակադրվածությունը, ջարդերի ու կոտորածների որոշակի մեխանիզմների առկայությունը։

«Հայաստանն» իր վավերագրությամբ արժանի հակահարված է տալիս պատմության թուրք կեղծարարներին ու նրանց աջակիցներին՝ վերստին հաստատելով, որ Հայոց ցեղասպանությունը նախապես պլանավորված ու հստակ, մանրակրկիտ հաշվարկված գործողություն էր՝ ուղղված հայության բնաջնջմանն ու նրա պատմական հայրենիքի բռնազավթմանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Ծ. (1994),** Անդրանիկ, դարաշրջան, դեպքեր ու դեմքեր, Երևան :
2. **Թյուրյունճյան Լ. (1975),** Յուշեր Վավերագրական իրողութիւններ արհաւիրքի ու ազատագրական պայքարի տարիներին, հրատ. Թեքեան մշակ. միութեան, Պէյրութ։
3. **Կարապետյան Հ. (1992),** Անդրանիկ, Եր., «Հայաստան» հրատ.։
4. «Հայաստան» (Թիֆլիս), 1917:
5. **Մարմարէան Ա. 1920),** Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս։
6. **Սիմոնյան Հ. (1996),** Անդրանիկի ժամանակ, գիրք Ա, Երևան, «Կաիսա» հրատ.։

REFERENCES

1. **Aghayan TS. (1994),** Andranik, darashrjan, djepkʻjer u djemkʻjer, JErewan :
2. **Tʻyutʻyunjyan L. (1975),** Hushjer Vavjerakragan iroghutʻiwnnjer arhawirkʻi u azatagragan paykʻari tarinjerin, hrat. Tʻjekʻjean mshak. miutʻjean, Bēyrutʻ:
3. **Karapjetyan H. (1992),** Andranik, JEr., «Hayastan» hrat.:
4. «Hayastan» (Tʻi flis), 1917:
5. **Marmarēan A. 1920),** Zoravar Andranik ew ir patjerazmnjerĕ, K. Polis:
6. **Simonyan H. (1996),** Andraniki zh'amanak, girkʻ A, JErewan, «Kaisa» hrat.:

Ներկայացվել է՝ 24.03.2022	Received 24.03.2022	Получено: 24.03.2022
Գրախոսվել է՝ 25.06.2022	Reviewed 25.06.2022	Рассмотрено: 25.06.2022
Ընդունվել է՝ 25.08.2022	Accepted 25.08.2022	Принято: 25.08.2022

E-mail: armenaraqsyan@mail.ru